



CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամուլի հաղորդագրություն

25. 12. 2020 թ.

Ռոբին ռոբոտն ընկերանում է երկարատև բուժում անցնող երեխաների հետ

ԵՐԵՎԱՆ - Այսօրվանից Պրոֆ Ռ.Հ. Յոյանի անվան արյունաբանական կենտրոնի Հայաստանի մանկական քաղցկեղի և արյան հիվանդությունների կենտրոնում երկարատև բուժում ստացող երեխաները նոր ընկեր կունենան՝ **Ռոբին ռոբոտը**:

«**Exppeer Technologies**» թիմի կողմից նախագծված ու պատրաստված ռոբոտի ֆինանսական ծախսերը հոգացել է **INICIAR** գլոբալ գործողությունների հիմնադրամն ու Նազարյան ընտանիքը՝ որպես հայաստանյան գործընկեր ներգրավելով «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամին (**ՔՈԱՖ**):

Ռոբոտին իր նոր տանը ողջունեցին ոչ միայն երեխաներն ու տեղի բժիշկները, այլև ԱՄՆ-ից ուղիղ կապով միացած բարերարը:

«Ռոբինը հույսի, ժպիտների և ընկերակցելու ռոբոտ է բուժում ստացողների, նրանց ընտանիքների ու Արյունաբանական կենտրոնի անձնակազմի համար: Մենք աշխատում ենք սոցիալական զարգացման ուղղությամբ և հավատում ենք, որ ամեն երեխա արժանապատիվ կյանք պիտի ունենա: Մեր ազգի համար այս դժվարին օրերին նվազագույնը, որ կարող ենք, մեր կրտսերներին ուրախություն պարգևելն է», - ընդգծեց INICIAR-ի հիմնադիր տնօրեն **Վերա Նազարյանը**:

2019 թվականին Exppeer Technologies ընկերությունը մեկնարկել է Ռոբին ռոբոտի ներդրման գործընթացը առողջապահության ոլորտում: Ռոբին ռոբոտը արհեստական բանականությամբ աշխատող շատ այլ ռոբոտներից տարբերվում է նրանով, որ երեխայի հետ հաղորդակցվելիս ցուցադրում ու տարածում է էմոցիաներ, հուզական կապ է ստեղծում նրա հետ: Նա օգնում է ապաքինման փուլում գտնվող երեխաներին գունավորել հիվանդանոցային միջավայրը, չկենտրոնանալ ցավի ու տհաճ ապրումների հետ ասոցացվող հիվանդանոցային առօրյաի վրա:

«Նման նախաձեռնությունները չափազանց կարևոր են, որովհետև երեխաները, երկարատև բուժման ընթացքում, անընդհատ կարիք ունեն դրական միջավայրի, չէ՞ որ դա ևս ազդում է բուժման լավ արդյունքների վրա: Շատ ուրախ ենք ողջունել Ռոբին ռոբոտին մեր շարքերում, և համոզված եմ՝ նա կդառնա մեր թիմի անբաժան մասն ու երեխաների սիրելի ընկերը», - կարևորեց Ռ. Յոյանի անվան արյունաբանական կենտրոնի տնօրեն **Սամվել Դանիելյանը**:

Ցավոտ միջամտությունների ժամանակ Ռոբինին հաջողվում է շեղել երեխաների ուշադրությունը եւ նվազեցնել ցավի իրենց ընկալումը: Ռոբինի հետ շփումից հետո որոշ երեխաների մոտ նույնիսկ լավանում է ախորժակը:



CHILDREN
OF ARMENIA
FUND

«Expoper Technologies»-ի հիմնադիր և գործադիր տնօրեն **Կարեն Խաչիկյանը** նշեց. «Մենք շատ ուրախ ենք, որ այս հիանալի նախաձեռնությունը կյանքի կոչվեց INICIAR գլոբալ գործողությունների հիմնադրամի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի համատեղ ջանքերով: Կարևորում ենք, որ համագործակցության շնորհիվ Ռոբին ռոբոտը այսուհետ կլինի երեխաների մտերիմ ընկերը Պրոֆ. Ռ. Հ. Յոյանի անվան արյունաբանական կենտրոնում և իր ներկայությամբ ավելի ուրախ ու լուսավոր կդարձնի երեխաների առօրյան»:

Բուժվող երեխաները Ռոբինին ընկալում են որպես հասակակից ընկեր. նա զրույցի բռնվելու և այն զարգացնելու որակներ ունի. հետաքրքրվում է հիվանդ երեխայի տրամադրությամբ, հարցեր տալիս նրա խաղալիքների, նախասիրությունների, ընկերների կամ ընտանիքի մասին, ի հայտ է բերում երեխայի անհանգստությունները, փորձում պատասխանել հուզող հարցերին: Դրանով նաև ավելի դյուրին է դառնում բժշկների հետ աշխատանքը ու փոխվստահությունը:

«ՔՈԱՖ-ը դեռ վաղ տարիքից աշխատում է Հայաստանի գյուղերի երեխաների և ծնողների հետ՝ առողջապահական ծրագրերի միջոցով փորձելով կանխարգելել հնարավոր հիվանդությունները կամ դրանց զարգացումը: Այսօր էլ մենք մեծ ուրախությամբ միջնորդ ենք դարձել կարևոր մի առաքելության՝ հենց Անանորից առաջ ժպիտ ու դրական հույզեր պարզել այն երեխաներին, ովքեր Նոր տարին նշելու են ոչ թե տանը, այլ հիվանդանոցում», - նկատեց ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն **Կորյուն Խաչատրյանը**:

INICIAR գլոբալ գործողությունների հիմնադրամի մասին

INICIAR գլոբալ գործողությունների հիմնադրամը բազմամասնագիտական թիմի հետ է աշխատում՝ խոցելի համայնքներում փոփոխություններ բերելու և կայուն զարգացում ապահովելու նպատակով: Այս նպատակին հասնում է կապերի լայն ցանց կառուցելու, տեղեկացվածության և իրազեկվածության բարձրացումն ապահովելու շնորհիվ: INICIAR գլոբալ գործողությունների հիմնադրամի համար հիմնասյուներ են առողջությունը, կրթությունը, կինը, երեխան, շրջակա միջավայրը, միգրացիան, բնակարանաշինությունը և միկրոֆինանսավորումը:

Ռ. Յոյանի անվան արյունաբանական կենտրոնի Հայաստանի մանկական քաղցկեղի և արյան հիվանդությունների կենտրոնի մասին

ՀՀ առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Հ. Յոյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կազմում գործող Հայաստանի մանկական քաղցկեղի և արյան հիվանդությունների կենտրոնը Հայաստանում մանկական չարորակ նորագոյացությունների և արյան համակարգի հիվանդությունների ախտորոշման և բուժման եզակի մասնագիտացված կենտրոն է: Կենտրոնն իրականացնում է



CHILDREN
OF ARMENIA
FUND

մանկական արյունաբանական և ուռուցքաբանական խնդիրների լիարժեք
ախտորոշում և բուժում՝ ժամանակակից լավագույն սարքավորումներով,
միջազգային ուղեցույցներով, բուժական ծրագրերով և գործելակարգերով:

Expper Technologies-ի մասին

Expper Technologies-ը ստեղծել է հայկական առաջին ռոբոտին, որի նպատակն է օգնել երեխաներին
հիվանդանոցային միջավայրում ստանալ առավել դրական և արդյունավետ փորձ:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն
է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային
զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի
իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական,
առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են
համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի
շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Պեղարքունիքի, Շիրակի և Տավուշի
մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսակական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը
կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում
շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի
մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին
կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: